Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
մարտի 24-ի N 383 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ՄՐՑԱՆԱԿԱԿՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ, ՎԵՐԱՀՍԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄՐՑԱՆԱԿԱԿՐԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ

1. Սույնով կարգավորվում են դրամական պարգևների և դրամական միջոցների չափերը, միջոցառումների վերահսկման, համակարգման, այդ թվում՝ մրցանակակրի կողմից ստացված դրամական միջոցների օգտագործման համար օրենքով նախատեսված միջոցառումների իրականացման պայմանները (միջոցառումներն ըստ նպատակի, իրականացման ժամկետների, դրամական միջոցների չափերի) սահմանելու, ինչպես նաև դրամական միջոցները մրցանակակրին փոխանցելու վերաբերյալ հարաբերությունները:

2. Գրականության և հրապարակախոսության, երաժշտության և կատարողական արվեստների, կերպարվեստի, թատերական արվեստի, կինոարվեստի, ճարտարապետության և քաղաքաշինության, ճշգրիտ և բնական գիտությունների, հումանիտար և հասարակական գիտությունների ոլորտներում որպես Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ շնորհվում են մրցանակի դափնեկրի կրծքանշան, վկայագիր և դրամական պարգև՝ 5 000 000 դրամի չափով:

3. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական՝ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկրին որպես մրցանակ շնորհվում են՝ մրցանակի դափնեկրի դիպլոմ, պատվոնշան, հավաստագիր և դրամական պարգև՝ 100 000 000 դրամի չափով և 50 000 000 դրամի չափով դրամական միջոցներ՝ «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով

և սույն հավելվածի 4-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված կարգով՝ մրցանակ ստանալու հաջորդ երկու տարվա ընթացքում տնօրինելու իրավունքով:

4. Սույն հավելվածի 3-րդ կետում նշված դրամական միջոցներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետությունում աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի, մաթեմատիկայի բնագավառների հետագա զարգացման համար՝ ըստ «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նպատակների՝ հետևյալ չափերով՝

1) 25 000 000 դրամի չափով միջոցներ՝ գիտական հետազոտություններին աջակցության մրցույթի կազմակերպում.

2) 12 500 000 դրամի չափով միջոցներ՝ գիտաշխատողների՝ Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններ գործուղումների ֆինանսավորում.

3) 7 500 000 դրամի չափով միջոցներ՝ Հայաստանի Հանրապետությունում գիտաժողովների կազմակերպում.

4) 3 600 000 դրամի չափով միջոցներ՝ պետական բուհերում մագիստրոսի ուսումնական ծրագրով ուսումնառող ուսանողների կրթաթոշակների տրամադրում.

5) 1 400 000 դրամի չափով միջոցներ՝ դափնեկրի և մրցանակի արժանացած աշխատանքի հանրայնացում:

5. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան յուրաքանչյուր վեց ամիսը մեկ՝ ընթացիկ, իսկ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

6. Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական, Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի դափնեկիրը պարտավոր է սույն հավելվածի 3-րդ կետում նշված դրամական միջոցների օգտագործման մասին համապատասխան ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և

իրականացնող նախարարություն ներկայացնել ընթացիկ (վեցամսյա), իսկ նույն կետով սահմանված ժամկետի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփիչ հաշվետվություն, որի հիմքերը պահպանվում են դափնեկրի մոտ: Դրամական միջոցների օգտագործման վերաբերյալ պայմանագիր է կնքվում դափնեկրի և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի միջև:

7. Դափնեկրին դրամական պարգևը և դրամական միջոցները փոխանցվում են նրա կողմից ներկայացված բանկային հաշվեհամարին:

8. Սույն հավելվածի 4-րդ կետով նախատեսված միջոցառումների համակարգումը, այդ թվում՝ միջոցառումների իրականացման պայմանների (միջոցառումներն ըստ նպատակի, իրականացման ժամկետների, դրամական միջոցների չափերի) ապահովման, ինչպես նաև ծրագրերի իրականացման վերահսկությունն իրականացնում է սույն որոշման 2-րդ կետի համաձայն այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը:

9. Համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» օրենքի՝ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մրցանակակիր ընտրող հանձնաժողովների գործունեության, մրցանակաբաշխության կազմակերպման, մրցանակների մաս կազմող բաղադրիչների պատրաստման և դրամական պարգևների ու դրամական միջոցների ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախատեսում է համապատասխան միջոցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24.03.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ